

ՊԱԼԵՐԸ

ԺՄՆՀՈՒ բժիշկներդ պալարը կը ճեղքէք և թոյլ չէք տար որ
ինքնիրեն բացուի՛, յաճախ հարց տուեր են ինձ: «ԺՄՆՀՈՒ զեղ մը,
օծանելիք մը չէք տար, որ պալարը պայթի՛, հարցուց ինձ մէկը:
Բացատրենք բոլորին մէկ անգամէն:

Ի՞նչ է պալարը, չխպամը, արցէսը, արսէն (abcès): Կ'արժէ
որ ընթերցողը հիմնական գաղափար մը ունենայ: Պալարը բորբոքում
մըն է, որ սահմանափակուած է և արտաքուստ միտում ցոյց չի
տար տարածուելու: Պալարը հասուն կը կոչուի, երբ բորբոքման
սահմանափակումը աւարտեր է և թարախով լեցուեր է: Թարախը
անընդհատական ճիգի մէջ է վագերու, յառաջանալու նուազագոյն
դիմագրութիւն ցուցնող ճանապարհով: Մորթի ներքն հասած պա-
լարները սովորաբար կը պայթին մորթէն դուրս: Նշմարած էք
անշուշտ որ պայթելիք տեղը կարէ կը կազնայ, յետոյ կէտ մը կը
շինէ և ապա շարաւը փոքրիկ կամ մեծ ծակէ մը դուրս կը հոսի:
Որքան շուտ թարախը պարպուի, այնքան ալ շուտ կը մինի նոր
հիւսկէններու ապաբինումը, տեղաւորումը:

Բժիշկը կը նախընտրէ նշտրակով ճեղքել պալարը, որովհետեւ

1. Պալարը հասուննալէն վերջ, պայթելու համար, յաճախ եր-
կար ժամանակ կը պահանջէ. այդ կը նշնակէ հիւանդի տառապանքը
երկարացնել, մինչ բժիշկը կը կտրէ հէնց որ հասունութեան նշան-
ները կը դառնան ակներե և հաստատ:

2. Պալարը ինքնիրեն պայթելու համար պէտք է մեռցնէ մորթի
մէկ գլխաւոր մասը, որը յորժ կ'ուշացնէ վէրքի ապաբինումը. մինչ
բժիշկը կը կտրէ երբ դեռ մորթը առողջ է և հիւսկաբար շուտ
աղէկնալու աւելի շատ պատեհութիւն կը ներկայացնէ:

3. Պալարը կարող է պայթիւ շատ փոքր ծակէ մը, որ անբա-
ւարար է թարախի շուտափոյթ և անմիջական պարպումին համար,
մինչդեռ նշտրակը բաւարար մեծութեամբ բերան մը կը բանայ:

4. Պայթած պալարի մը խորըը, ի՞նչ է պատահած և ի՞նչը կարող են պատահիլ ոչ ոք գիտէ: Կը պատահի, որ ոսկորը, ջիղը,
գեղձը, խուլը ևայլ շրջապատող կամ հարեւան հիւսկէնները վնաս-
ուած են ու կը սպառնան հիւանդին. երբ բժիշկը կը կտրէ պալարը,
կը մաքրէ անոր ծակն ու ծուկը, մէկ անգամով կ'ազատէ բոլոր
շրջապատը թարախի, միջրոպներու վնասակար հարեւանութենէն:

5. Եւ վերջապէս պալարը կարող է մորթէն չպայթիւ և երթալ
աւելի խորերը: Նշտրակը կ'արգիլէ այդ վտանգաւոր հնարաւորու-
թիւնը:

Զպէտք է մոռանալ այն, որ պայթած պալարները յաճախ
դուրսէն կը վարակուին, պայթելէն անմիջապէս յետոյ. բժիշկը ըստ

կարելոյն կ'արգիլէ արդ՝ ճեղքելու դէպքում :

Թոյլ տալ որ պալարը ինքնիրեն պայթի՝ անխոհեմութիւն է :

Բժ. ԵՐԻԱՆԴ ԽԱԹԱՆԱՍԵԱՆ

Սուտան

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԸՌ-ՈՂ-ԶԱՊԱՀՈՒԹ-ԻՒՆ

«Բուժանք»-ի նախորդ երկու թիւերուն մէջ մեծ հաճոյքով կարդացի իմ սիրելի բարեկամ Տօքթ. Ա. Մէզպուրեանի Դպրոցական Առողջապահութեան վրայ գրած շահեկան յօդուածները :

Գիտական արդի օրէնքներու առաջաղջութեամբ պատրաստուած իիստ կարենոր հրահանգները կը պարունակէին անոնք. երանի՛ թէ Ազգային Վարժարանները վարող մեր հոգաբարձու մարմիններու կողմէ ուշաղջութեան առնուէին, յօդուստ առողջութեան այն մատադ սերունդին զոր կը բաղկացնեն ապագայի հայրեր ու մայրեր :

Դպրոցական Առողջապահութիւնը շատ կանութիչն իմ մատածուածիս առարկայ ըրած եմ: 1886-ին Խւսկիւտարի Հայ Վարժարանները շարաթական այցելութիւններով կերթայի և բոլոր աշակերտները ու դասարանները աշքէ անցունելով կը հոկէի անոնց առողջութեանը. և երբ 1897-ին պատիւ ունեցայ Ազգ. Ուսումնական Խորհուրդի Աւենապետն ըլլալու, իմ ընկերներուս հետ համախորհուրդ, պատրաստեցինք կարգ մը հրահանգները, զորս լրջաբերականի ձևով 1897 Ապրիլ 18-ին ուղղեցինք բոլոր Թաղ. Խորհուրդներու, և կրցանք ամէն վարժարանի համար յատուկ բժիշկ կարգել:

Կը ներկայացնեմ հոս այդ լրջաբերականի օրինակը, իրը լրցուցիչ մաս, Տօքթ. Ա. Մէզպուրեանի ա՛յնչափ խնամքով պատրաստած առողջապահական պատուէրներուն.

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

Վասն առողջապահիկ կանոնաց կիրառման

Ազգային Կեդր. Վարչութեան Ուսումնական Խորհուրդն իւր Մարտ 22-ի նիստին մէջ տուած որոշման համաձայն կը յանձնարարէ Պատ. Խորհրդոյդ,

1. Յանձնել մեր վարժարանը խորհրդոյս կողմէն նշանակուած բժիշկին՝ Տօքթ.-ի, որուն պաշտօն է՝ շարաթական այցելութիւններով, վարել վարժարանին ընդհանուր առողջապահութիւնը:

2. Կատարել անյապաղ ի՞նչ որ բժիշկը կը պատուիրէ և վարժարանիդ առողջապահական վիճակին կանոնաւորութիւնը կը պահանջի: